

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ր Է Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ը

III

1-ն Օգոստոսի 1895 թ.

Ցածկական պետութեան ամբողջութիւնը և Փոքր-Ասիայում ներկայ քաղաքական դրութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնն է ծնունդ տուել այն հռչակաւոր ղեկորմաների ծրագրին, որով զբաղւած են այժմ այնքան ուղեղներ և որը, իբրև մի լա թ, դեռ շարունակուում է քաջքշել. . . որովհետև դրանց՝ այդ ամբողջութեանը ու statu quo-ին, ինչպէս քանիցս ասել ենք, վտանգ է սպառնում. այդ վտանգ սպառնացողը դարերով ստրկացած հայ ժողովուրդն է, որ այսօր գլուխ է բարձրացրել ու իր մարդկային իրաւունքների յաղթանակն է պահանջում. և դրան հասնելու համար նա, ժողովուրդը, դիմում է յեղափոխութեան: Աւրեմն Հայկական ղեկորմաների ծագման կէտը Փոքր Ասիայի ներկայ քաղաքական փիզիոնոմիային սպառնացող Հայկական յեղափոխութիւնն է:

Համոզւենք, որ այս է ճշմարտութիւնը. համոզւենք, որ իսկապէս ղեկորմանը մի միջոց են վերոյիշեալ սպառնացող վտանգի առաջն առնելու, որի իրականանալը շատ ծանր հետեանք կարող է ունենալ եւրոպական պետութիւնների համար, եթէ նրանցից իւրաքանչիւրն աշխատի օգտել այդ հանգամանքից՝ ինչպէս իւր շահերն են պահանջում, և հայ ժողովուրդին ու միմեանց փոխադարձ զիճում չանեն: Մենք պնդում ենք, որ դիպլոմատիայի դրդիչ ոյժը՝ խառնելու Հայկական շարժմանը իրենց պետական շահերն են և ոչ թէ մարդասիրութիւնը և այլն, ինչպէս նրանք և նրանց արբանեակներն են աշխատում հաւատացնել հայ ժողովուրդին. մենք այդ ցոյց տւինք քաղաքական-տնտեսական դրական հիմունքներով:

Բայց բաւական չհամարենք այդ և հաւատանք կենդանի մարդկանց խօսքերին՝ դիպլոմատներին, որ սրանք

ղեկավարում են բարձր, մարդասիրական գաղափարներով, հաւատանք, որ դիպլոմատները, իբրև մարդիկ, ընդունակ են մոռանալ մի րոպէ, հազարաւոր դիակների, աւերակ դարձած ու մարդկային արիւնով ողողւած երկրի առջև, որ իրենք ոչ միայն պետական անձեր են, այլ և իբրև մարդ ունին խիղճ, զգացմունք, որ գիտեն զգալ, յուզւիլ և արտասունքներ սրբել. . . Հաւատանք, և դիմենք նրանց մարդկային խելքով կազմած ղեկորմաների ծրագրին, որ պիտի վերջ տայ տիրող սարսափիլի գազանային բարբարոսութեանց, սպեղանի լինի վէրքերին և աւերակ ու սգաւոր երկրի թշուառ որդիներանց մխիթարէ. . .

Բայց նախ քան դիմելը երեք պետութիւնների կազմած ղեկորմաների ծրագրին, պիտի դնել իբրև ընդհանուր հիմունք՝ որ մի ծրագիր այն ժամանակ ունի raison d'être, գոյութեան իրաւունք մի որ և է երկրի համար, երբ այդ ծրագիրը կազմւած է միաժամանակ թէ նոյն երկրի ժողովուրդների և թէ ընդհանուր մարդկութեան կեանքի պահանջների համեմատ, և երբ այդ ծրագրի հիմքը կազմում է այն հողը, որին պիտի պատւաստւի. այլապէս՝ ծրագիրը այն ժամանակ է բաւարար և կենսական, նա այն ժամանակ կարող է դարձանել ժողովրդի ցաւերը, երբ այդ ծրագիրը կազմւած է նոյն ժողովրդի հասարակական կեանքում գոյութիւն ունեցող տնտեսական յարաբերութիւնների, փիլիսոփայական-հասարակական հայեացքների, հասկացողութիւնների ու սովորութիւնների համեմատ, իսկ միւս կողմից, միաժամանակ նրանք՝ ղեկորմանը, կապել են վերոյիշեալները այն հասարակական կազմակերպութեան ձևի հետ, որը ծնունդ է մարդկութեան տնտեսական կեանքի ու նրա փիլիսոփայական-հասարակական հայեացքների, որոնք, իբրև անհրաժեշտ պայման՝ մարդկութեան յառաջադիմութեան և մարդկանց երջանիկ ապրելու համար՝ ապահովում են թէ մարդկանց աշխատանքը և թէ աշխատանքի արդիւնքից արդարացի կերպով օգտւելու կարելիութիւնը ու տալիս ազատ ապարէզ և նպաստաւոր պայմաններ զարգացնելու մարդ-

կային ֆակուլտէները, կարողութիւնները, որոնք անհրաժեշտ են մարդկանց՝ թէ իբրև անհատի և թէ իբրև հասարակական էակի:

Եթէ ծրագիրը չէ կազմած այս երկու հիմունքների իրեն ժողովրդի և ընդհանուր մարդկային կեանքի պահանջների համեմատ, այդ ծրագիրը ոչ միայն կը մատուցի մեռելութեան, այլ և կը լինի վնասակար, մի չարիք նոյն երկրի համար. նա ոչ միայն պապակած սրբուների վրայ չի կարող մի կաթիլ սառը ջուր գցել, այլ և նրանց կը խորովի, կայրի. . .

Ընդհանուր տեսութիւնից անցնենք մասնաւորի և այժմ մենք կանգնած ենք համբաւաւոր ըէֆօրմների ծրագրի դիմաց. —

Այդ ըէֆօրմները կազմած են Տաճկահայաստանում տիրող պայմանները փոփոխելու համար. սրանից պարզապէս հետևում է, որ զիպլոմատիան անբաւարար է համարել ներկայ գրութիւնը: Գիպլոմատիան անբաւարար համարելով ներկայ պայմանները, նա պիտի խմբագրէր այնպիսի ըէֆօրմներ, որոնք կարողանային փոփոխել նրանց, որ ասել է թէ՛ տիրող չարիքը ոչնչացնելով, պիտի առաջ բերէին տեղական բնակիչների համար նպաստաւոր պայմաններ: Իսկ այդ կարելի էր միայն այն ժամանակ, երբ նա ի նկատի առած կը լինէր երկիրը և նրա ժողովրդները՝ իրենց պատմական կեանքով ու կուլտուրայով, երբ նա արհամարած չէր լինիլ երկրի հասարակական կեանքի հիմունքները՝ նպաստաւոր ու աննպաստ կողմերով, անտեսական, քաղաքացիական և իրաւաբանական յարաբերութիւնները ու լուրջ ուշադրութեան առած կը լինէր ամբողջութեամբ այդ տեղ թագաւորող չարիքները և ղեկավարած հումանիտական գաղափարով: Եւ այն ժամանակ, առաջի կէտը, որ կը գրաւէր ըէֆօրմներ կազմողների ուշադրութիւնը, այդ կը լինէր Տաճկահայաստանի ներկայ անտեսական կեանքը ու քաղաքական վիճակը, որոնց նրանք կը գտնէին ոչ միայն անբաւարար, այլ և բոլորովին հակամարդկային և անհրաժեշտ անմիջապէս արմատական փոփոխութեանց ենթարկելու և նրանք՝ հայ ժողովրդի կեանքում արմատ բռնած լայն ընտրողական սկզբունքը մտցնելով կառավարչական բովանդակ գործողութիւնների մէջ, իսկոյն ձեռնամուկ կը լինէին հարկերին ու հողային խնդրին, սուլթանի-կենտրոնական կառավարութեան իրաւունքներին և կառավարչական սիստէմին իւր ճիւղաւորութեամբ, ժողովրդների յարաբերութեանց ու նրանց մտաւոր և բարոյական կեանքին, մի քանի դասակարգերի վերաբերումը դէպի ժողովուրդը ու սրանց փոխադարձ յարաբերութեանը և այլն:

Ըէֆօրմները պիտի շօշափէին գլխաւորապէս այս խնդիրները. մինչդեռ զիպլոմատիան թողել է կենսական խնդիրները, թողել է չարիքը իւր արմատում և միայն վերցրել է խնդրի արտաքին կողմը, մակերևոյթը: Նրա առաջին հոգսը եղել է՝ որքան հնարաւոր է, չըդիպչել սուլթանի միապետական իրաւունքներին, այսինքն՝ չարիքը արմատում թողնել և գլխաւորապէս ծանրացել է պաշտօնեաների ինչ կրօնի լինելու վրայ և այդ հարցը վճռել է նրանց յիշգրիլ պար ածելով: այսինքն, եթէ շրջանի, գաւառի, գաւառակի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը քրիստոնեայ է, այն ժամանակ կառավարիչները քրիստոնեաներ են, իսկ օգնականները մահմեդական, և հակառակը. իսկ դրանց իբրև խորհուրդատու ընտրում է յանձնաժողով որի անդամների կէսը քրիստոնեայ են, կէսը մահմեդական՝ եթէ ազգաբնակչութիւնը խառն է, եթէ ոչ՝ յանձնաժողով բոլոր անդամները պատկանում են ազգաբնակչութեան կրօնին. կարծէք թէ Հայկական խնդրի էութիւնը կայանում է կրօնի մէջ. բոլոր պաշտօնեաները նշանակում է սուլթանը, կիսապաշտօնապէս յայտնելով եւրոպական պետութիւններին. տուրքերի բաշխման ձևի, սիստէմի, տեսակի և քանակութեան մասին ոչ մի բառ, թէև հաւաքած տուրքերի մի մասը պիտի մնայ երկրի ծախսերը հոգալու, այն էլ յհամաձայն կառավարութեան կողմից հաւանութիւն գտած բիւդժէի. կառավարչական հարցը թողած է ապագայում կազմելիք մի ինչ որ յանձնաժողովի, իսկ միւս անտեսական հարցերի մասին ոչ մի յիշատակութիւն, ինչպէս և ժողովրդի իրաւունքների, մամուլի և այլն մասին, որոնց ցուցակը շատ երկար է և թւելը ապարդիւն. . .

Այժմ ասացէք, ո՞րտեղ է այն արմատական փոփոխութիւնը, որ մտցուած է երկրի քաղաքական ու վարչական իշխանութեան, մարմնի մէջ. ո՞ր չարիքի առաջն է առնւած, ո՞րտեղ է հումանիտական գաղափարը, ո՞րտեղ է ժողովուրդը և նրա իրաւունքները, ո՞րն է ժողովրդի պահանջներին բաւականութիւն տալիս, ի՞նչով են ապահովում նրա աշխատանքը, պատիւը, կեանքը, և վերջապէս ի՞նչով է վերջ դնում դժոխային գրութեան. . .

Չ Խ Ո Ի Բ Ի Կ Ի Ի Ը
(Ա.Ս.ՍՊՈՒՐԱ.ԿԱՆ.)

Յովհաննէս Ագրիպասեանի և Ալէքսանդր Գօլջեանի անմոռաց գերեզմանների շուրջը մի կռիւ ևս:
Մայիս 30-ի գիշերն է: Արևնալի աղթարանը բաց-

ւում է: «Դաշնակցութեան» հայդուկային խումբը վազում, թռչում է. նա այլ ևս չի նայում ոչ ջրի, գետի և ոչ քարի, կրակած է ու համերաշխութեամբ սլանում է, որովհետև լոյսը մտնում է... Ընկերները մինչև ծնկները ցետի ջրի մէջ են, այրում են, ոտքերի տակը պողոճակներ են դուրս եկած. ոչինչ, ան մեռնիմ ևս այդ յոգնած ոտքերին: Լոյսը բացւում է, մեր ընկերները հագիւ իրանց ձգում են Չուխ գիւղից կէս ժամ հեռու, Գիւլալարա ձորի բերանը և խկոյն թաղանում են ցածր, շատ ցածր դիրքի վրայ, քարերի տակ: Բռնում են երկու, իրարից բաւական հեռու դիրք, իսկ բարձր կէտում դնում պահապան:

Ժամը 8-ին (եւրոպակ.) երևում է Չուխ գիւղից մի քիւրդ, միամիտ մտնում է խմբին ցածրի դիրքից: Պահապանն իսկոյն նկատում է այդ, մինչ այս այն քիւրդը փախչում, անհետանում է: Չանցած մի ժամ, պահապանը նորից լուր է տալիս, թէ Չուխի հաւարը թափուցաւ: Քնհատ, ջարդած հայդուկները թռչում են իրենց հրացանների գլուխը: «Վուխ, կուխ, գոռում են մեր ընկերները, երգ»: Հասնում է և Դուաւայի հաւարը: Հաւարի են հասնում նաև Չուխ կիրճի պահանոցի ծոյլ զաֆտիանները:

Ըստ երևոյթին 100-ի չափ են թշնամիները, թէև քիչ հրացաններով: Արժէ կուել և պայթում են առաջին անգամ մեր ընկերների հրացանները, տաքանում է կուիւր: Առաջի քայլին երկու հատ գլորում են թշնամուց, որ հազիւ նկատում է մերոնցից: Սակայն քիչ ժամանակից յետոյ քիւրդերն ու անվարտիկ զաֆտիանները՝ տեսնելով յեղափոխականների անգուլթ և փորձած գնդակները, փախչում են հեռու, գոռալով «փախէք, փախէք, սրանք դե են, սրանք մեզ կը կոտորեն»: Գիրք են բռնում հեռու և գլուխները քարերի տակից դուրս չեն հանում: Վուխն անտանելի է դառնում, դանդաղ, միայն երբեմն երբեմն հրացան է պայթում: Քիւրդերը հաւարի էին զրկած Բաշկալա և Խօշաբ, որոնց մէջ տեղն էր գտնւում մեր հայդուկային խումբը: Վէս օրին քիչ էլի սկսում է սաստկանալ, բայց հեռուից: Խումբը մաս մաս կուում և հերթով քնում է, արհամարելով այդպիսի զուելի կուիւր և ինքն այնպիսի հանգամանքների մէջ էր, որ չէր կարող հետամուտ լինել: Երեկոյեան դեմ կուիւր քիչ քիչ սկսում է տաքանալ, բայց երբ երեկոյեան ժամը 5-ին թափւում են երկու գաւառներից օգնութիւնները, գնդակները սուլում են, Չուխի շղթաները կրկնապատկում: Շուտով մթնում է, հերոսների խումբը ձղում անցնում է այդ հարիւրաւոր գայլերի միջից բոլորովին անվնաս և անվրդով շարունակում իւր ճանապարհը...

Բաշկալայից լուր առանք, թէ երկու զաֆտիա և երկու քիւրդ են սպանւած, ոմանք ասում են աւել, ոմանք պակաս, իսկ քրդերը միշտ ծածկում են:

—Վուխից յետոյ:
Այնուհետև Խօշաբից պաշտօնական հեռագիր զըրկւեց կուսակալին: Վասկածելով, որ «Դաշնակցութեան» խումբը կը թափուի Վան, իսկոյն Վարազ լեռան աջ և ձախ կողմի փոքրիկ կիրճերի վրայ կորդօններ դրին, բըռ-

նեցին այդ գաւառների բոլոր ճանապարհները:

Սուարիներ զօրկւեցան Վանից Քուէլ հայ գիւղը, Շըակեւտկեան և ուրիշ գիւղեր. զճուր, գուր:

Հարեմին արժանի սուլթան, սրանք բողաղքեասանի գնդակներն էին, սրանք կը ձղեն ամեն ուղղութեամբ: Վեցցե՛ն հայդուկները:

—Մի քանի օր առաջ մի այլ, լոկ միայն փրփուր հանող խումբ սահմանից ներս մտաւ և... առանց դիմադրութեան յանձնատուր եղաւ և Վասպուրականի առանց այն էլ պահպանողական ժողովրդի ոգին թուլացրեց: Ուրախ ենք, այս ընդհարումը մի քիչ սիրտ տուց:

—Լսում ենք, թէ Մոկսում չորս գիւղ են թալանել և 12 մարդ սպանել քիւրդերը, շուտով կը ստուգուի: Իբր թէ 12 կանայք ևս բռնաբարւած են:

Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ա Շ Կ Ե Ր Տ Ի Ց

Հայաստանի գաւառներէն ամենէն խուլ անկիւն Ալաշկերտն է: Վը թալանին, կը տանին, կսպանին և այս ամենը կը մնայ անյայտ: Քիւրդ բեկերի ու տաճիկ պաշտօնականների կամայականութեանց չափ ու սահման չի տեսնուիր: Յիշենք այստեղ մի քանիսը՝ մեր տառապեալ ժողովրդի դառն վիճակի հետ մտաւորապէս ծանօթացնելու համար:

Քիւրդերը օր ցերեկով Ս. Յովհաննու վանքի միջէն տարան Բօզիկա գիւղ Յովհաննէս եպիսկոպոսի եղբօր աղջկը և սրա երեք տարեկան որդին: Ահա երկու ամիս է, եպիսկոպոսը գացած է Բայազէդ՝ փաշայի քով բողոքելու, սակայն աղջկը դեռ ևս չէ յանձնւած իրեն:

Քիւրդերը անցեալ աշնան ուժով մտան Ներքին Բօզի գիւղը, բռնի գրաւեցին հայերի տները և ապրանքը: Խեղճ գիւղացիք ձմեռը մնացին վանքի մէջ և Խումբը Պուճախ գիւղում: Այժմ եպիսկոպոսի միջնորդութեան շնորհիւ քրդերը հեռացած և հայերը բռնած են իրենց տեղերը:

Խումբու Պուճախ գիւղում քրդերը գիշերը յարձակւեցան Պողոս աղայի տան վրայ ու եղբօրը վիրաւորելով, տարան տան բոլոր թանգազին իրերը:

Նոյն գիւղում մշտապէս նստած Մուրադ պէյը, որը Ալի աղի մարդն է և անվերջ գէշութիւններ կընէ բոլորովին անպատիժ, կատարեալ պատուհաս դարձած է գիւղացոց համար: Իսկ ինքը՝ զիւանցի Ալի աղան Բուրգոսան գիւղ կը նստէ:

Նոյնն է Ուրխգամ բէկ միլիազիմը Խըզըր գիւղում:

Զօղայի Բագր էֆ. քեատիպ քիւրդը Դիագին գիւղէն տարաւ 8 եզ, 30 ոչխար, 50-60 սոմար ցորեն ու գարի՝ վիրաւորելով հանգում 3 մարդ:

Խըզըր գիւղում քրդերը եկեղեցին բնակութեան տեղ են շինած, աւազանը՝ բուխարի և մէջն էլ երկու թոնիր փորած:

Եծնջալու գիւղից Մէհմէդ աղան (Նադօրի լամուկ)

տարաւ 20 եզ, և վերաւորեց Տօտաղին: 8 ոսկի առնելով, եզները ետ տւեց:

Մանկասար գիւղից Բալօ և Աւգրահման զաչաղները տարան 10 ոչխար, 20 սոմար ցորեն: Իսկ անցեալ գարնան սպանեցին տէրտէրի եղբօր տղուն: Աւգրահմանը այժմ սպանած է, իսկ Բալօն ձերբակալւած:

Սակայն քրդեր ամեն անգամ անպատիժ չեն մնար: Քրդերի քարվան կանցնէր Եօնջալու գիւղի մօտով: Քրդեր գիւղ կը մտնին և կը պահանջին հաց, իւղ: Հայերը կը դիմադրեն և ծագած կուռում կը ջարդին քրդերին ու գիւղէն դուրս կը վռնդին: Այս առթիւ 12 հայ 20 օր բանտի մէջ կը մնան և 8 ոսկի տուգանք տալէն ետքը կազատւին:

12 քիւրդ կը յարձակին նոյն Եօնջալու գիւղի վըայ կը քշին նախիրը: 6 հայ տղերք հաւարի կը հասնին, և երկու քիւրդ վիրաւորելով, կը փախցնին միւսներին ու նախիրը կը խլին: Կը խլին նաև երկու խէնջար և մէկ թուր:

Ղարաքիլիսում ահա 4 ամիս է, ձերբակալւած կը պահեն 14 հայ վաճառականներ: Անոնց միակ մեղքը ստակ ունենալն է: Թաթախման գիշերը ամբողջ կառավարութեան պաշտօնեաների դրդմամբ պատրաստութիւն կը տեսնէր յարձակում գործելու հայերու վըայ: Իսկ երբ հայերը (Ղարաքիլիս. 80 տուն հայ և 100 տուն տաճիկ) նկատելով այս, իրենք ևս սկսան պատրաստութիւններ տեսնել պաշտպանութեան համար, տաճիկ ամբողջ ետ կայնեցաւ այդ մտքէն:

Նոյն տեղ գիշերով երեք մարդ սպանեցին և 2 աղջիկ ու մէկ կին յափշտակելով, Բիմբաշին տարան:

Եօնջալու գիւղում ձերբակալւած է և Կարին տարւած Տէր Յովհանէս քահանան:

Կառավարութիւն ամենևին յետ չի մնար քրդերէն: Գաղթականների մասին ոչ մի հոգ չի տաներ, և աւելի խստութեամբ կը վարւի ժողովրդեան հետ: Հարկը, որ կը հաւաքուի առաջ 4 ամսւայ ընթացքում, այժմ կը հաւաքուի 2 ամսւայ: Չնայած որ հունձը այս տարի լաւ պիտի լինի, յոյս չկայ բնաւ, որ ժողովրդի տանջանքները մեղմանան:

Ահա այն գիւղերի ցուցակը, որոնք դատարկեցան և քրդերով լեցւեցան. 1. Քուպղրան (40 տուն), 2. Չիրոն (30 տուն էր, մնացեր է միայն 2 տուն հայ), 3. Խըրդըտ (40 տ.), 4. Խալանդատ (20 տ.), 5. Ներքին Բօզի (30 տ.), 6. Կեավոգեավը (20 տ.), 7. Նօվրուզ վանքի գիւղ (30 տ.), 8. Սօփիա (30 տ., բռնած են Ռուսաստանից գաղթած թարաքամաններ):

Նորէն վերջերս վերադարձած են իրենց տները եպիսկոպոսի միջնորդութեամբ՝ 10 տուն Ներքին Բօզի, 3 տուն Խըրդըր:

Ե Ո Չ Ղ Ա Տ Ի

Ա Ր Դ Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

1893 տարւայ կոտորածին նկարագրութիւնը ըրած եմ ձեզ ըստ կարելոյն: Սպայելու համար հայ սրտերու վէրքերը, զորս բացած է յիշեալ ջարդը, Կնկիւրիի կուսակալ Մէմուհ լիաջա և Մուստաֆա լիաջա, որ իր մոլեռանդութեամբն և անգթութիւններովը նշանաւոր է ու եկած է իր բարբարոս, կեղեքիչ իշխանութիւնը գիականութեւ ու աւերականութեւ կանգնեցնող մեր «արգարակորով» սուլթանի կողմէ, կը սկսին գործել կարգ մը անմեղներով լեցունելով բանդերը, որոնք արդէն լեցուն են հոգևար վիրաւորեալներով: Բանտարկեալ քրիստոնեաներից իւրաքանչիւրին յարմար զրպարտութիւններ պատրաստելով բաժնեցին 200-ի չափ իսլամ սրկիաներու, յետոյ շրթայակապ հանեցին զանոնք պատերազմական ատենին առջև. հոն դատաւորները սուտ վկայութիւններ լսելէ յետոյ, առանց մտիկ ընելու այն արգար գիտողութիւնները, զորս կընէին զրպարտեալները, ամենքն ալ դատապարտեցին տարբեր պայմանաժամերով որոնց 17-ը մահուան: Եւ ինչո՞ւ չընեն, երբ այս խժոճութիւնները կառավարութեան թելադրութեամբ և մինարէներու բարձունքէն միւտեցնելու ըրած մէկ նշանովը կատարւած են: Յիշեալ կուսակալն ու պատերազմական ատենի անդամներն, որոնք տեղեակ են կատարւած բոլոր չարագործութեանց, մտքերն են անգամ չէ անցեր պատժել մի քանին այն պաշտօնեաներէն ու երևելիներէն, որոնք սոսկ անձնական նկատումներով հրապարակը աղմուկով լեցունելով՝ ժողովրդեան անհուն վրասներ հասցնելու պատճառ եղած են: Մինչդեռ անգին՝ յանդերուն խորշերը, 180-ի չափ անմեղներ յանձնած են գազանաբարոյ և մարդասպան բանդապահներու, որոնց վայրենի բնաւորութեան հնարած սոսկալի տանջանքներու տակ կը չարչարին և որոնց արձակած աղաղակների բնաւ ու է ազդեցութիւն չընեն յիշեալ տանջողներուն քարացած սրտին: Ահ, այս բարբարոս ու անգութ կառավարութիւնը դեռ կապրի ու չի չքանար աշխարհիս վրայէն... Բայց կը յուսանք, թէ լուսաշող արևը վերջապէս օր մը, ինչպէս ուրիշներուն, նմանապէս մեր անկախ կեանքը պիտի լուսաւորէ. սակայն ափսո՞ս, անոր ճառագայթները անթիւ աւերակներու ու զոհերու վըայ պիտի շողջողան...

Այն պաշտօնատարք, որոնք որպէս թէ արդարութիւնը ի գործ դնելու և խաղաղութիւնը վերահաստատելու համար եկած էին, աւերակ, սոսկում և սարսափ սփռեցին չորս կողմ, մոխրի վըայ նստեցուցին Եողլատի բնիկ հայ ժողովուրդը: Ըրջակայ հայ գիւղերուն մէջ, տուրքերու գանձման համար, եզ, գոմէշ և այլ կենդանիներ ու առարկաներ գրաւելով աներևակայելի աժան գներով կը ծախեն թուրք գնորդներու, որոնք արդէն ընկեր են թահսելաբարներուն: Եղած ձերբակալութեանց շնորհիւ, ժողովուրդն անկարող եղած

է իր արտն ու այգին մշակելու: Եւ արդէն Երկրագործական դրամատունն ալ դադարեցուցած է իր փոխառութիւններն հայոց, որով անօթութիւնն ու թըշուառութիւնը սոսկալի կերպով կը տիրէ հայ գիւղերումէջ: Գոհ պիտի ըլլայինք, եթէ Քննիչ-Յանձնախումբին անգթութիւնները ասոնք միայն ըլլային: Ասոնք թուրք ժողովուրդն ու զինուորները այնքան շփացուցած ու քաջալերած են, որ անոնց աչքին շան մը չափ իսկ յարգ և արժէք չունի հայ մը: Թահսելդարներն ու զինուորները, սուրբ հաւաքելու պատրասկաւ, խումբ խումբ գիւղերը կը թափեն. ուր ժողովուրդը, ինքը արդէն չոր հացի կարօտ՝ հաւով ու վառեակներով կը կերակրէ զանոնք և անոնց՝ մաղած ընտիր գարիով: Եւ այդ բարբարոսները, ծեծելէ, հայհոյելէ և, անպատկառ, անոնց պատիւը բռնաբարելէ յետոյ, կստիպեն, որ ականատես ժողովուրդը հաճութեամբ ընդունի ասոնք ու բնաւ բողբոջի ձայն չբարձրացնէ: Քանի քանի անգամ տեսնած է, որ ո՛ր գիւղի մէջ գեղեցիկ աղջիկ կամ հարս գտնուած է, կառավարութեան զօրքերը անմիջապէս կոխած են անոր տունը և, կապելէ յետոյ անոր նշանածը կամ էրիկը, անոնց ներկայութեանը պղծած ու յագեցուցած են իրենց գազանային կրքերը. ու կառավարութիւնը, որ այս ամենուն ականատես եղած է, բնաւ կարեւորութիւն չէ տւած:

Սա դէպքը կրնայ գաղափար մը տալ այն ընթացքին վրայ, զոր կառավարութիւնը բռնած է հայերուս դէմ:— Ազգունը ըսած տեղը, ուր կը գտնուի կառավարական պալատը, թուրք զինուոր մը Ծաղիկ անուն հայ աղջկան մը կուսութիւնը կը պղծէ բռնի: Աղջկան հայրը կը գանգատուի այդ զինուորի հարիւրապետին, որ սա պէս կը պատասխանէ՝ «ասանկ մանր մունը բաներու համար մի՛ բողբոջէք, եթէ ոչ ամենքդ ալ բանտը կը եցունեմ»: Ահա այս ամուսիններն, հայրերն ու նշանածներն են, որոնք խումբ խումբ «Արդարութեան դուռը» կը դիմեն՝ դարման խնդրելու համար այն վերքին, որ իրենց աղջկան, հարսին կամ նշանածին պատիւը այդ վայրենիներու գազանային կրքին զոհելէն գոյացած է իրենց սրտին վրայ, զոր իբր միակ դարման՝ «ձեզ բանտը կը լեցունեմ» կըսուի: Պատճառ, — որովհետեւ պատիւ կը փնտռեն, իրաւունք կը պահանջեն, իրենց պաշտպանելու կը համարձակին: Ա՛հ, անոնք որ դիակային վիճակ մը ունին նիւթապէս, պէտք չէ՞ որ միևնոյն վիճակին ենթարկել բարոյապէս ալ:

Փարզանի կօլէժի շրջանաւարտներէն Գասպար Լորտեան, իր չորս ընկերներով մեկտեղ, աւելի քան երեք տարիէ ի վեր կը փտին Եոզղատի բանդին մէջ, առանց պատճառի: Ասոնք մահուան դատապարտեցան՝ ամենափոքր ապացոյցի մը իսկ չգոյութեան և հակառակ այն հարիւրաւոր վիճակներու, որոնք կը հաստատէին թէ ամբաստանութեան օրը Փարզանի մէջ չէին գտնուեր յիշեալները, այլ Հաճի-Քէօ: Պօլսոյ անգլիական դեսպանին միջնորդութեամբ Կնկիրին զրկեցան՝ այն տեղի վերաքննիչ ատենին առջև վերստին դատուելու համար: Անգղիոյ հիւպատոսին ներկայութեանը երևան ելած է յիշեալներու անմեղութիւնը, բայց այն պահուն, երբ

բոլորովին անպարտ ըլլալին պիտի հաստատուէր, վերաքննիչ ատենի անգամը, որոնք ուզածնուն պէս կը վարին արդարութեան գործերը, զանոնք Եոզղատ կը դերկին վերստին, առանց ու է վճիռ արձակելու: Հոն մութ և խոնաւ զնտան մը կը նետեն և անկէ վերջ բնաւ անունին չէ յիշած, որպէս թէ մեռած ըլլային խեղճերը:

Քաղաքիս երեւելիներէն՝ Խալիլ, Խալիտ, Լուծֆի և Օսման պէյերն ու Սալիհ և հաճի Հաշըմ էֆէնտիները, որոնք գատարանի և մեծլիսի իտարէի անգամներէն են, բոլորովին կը կողոպտեն Եոզղատի և շրջականերու բոլոր հայ ժողովուրդը: Առաջները, երբ թուրք մը հայու մը գէշութիւն ընել ուզէր, բաւական էր որ ըսեր թէ՛ «կեաւուր տինիմէ սեօյտի» (անհաւատը կրօնքիս հայհոյեց), երկու սուտ վկայով կամ լեզուն կը կտրէին և կամ կաքսորէին. իսկ հիմա՛... «կեաւուր գօմիթէ տիր» ըսեցա՛ւ մի, վկայի ալ պէտք չկայ. կամ յիշեալ պէյերուն և էֆէնտիներուն ուզածը տալու է անպատճառ, եթէ բոլորովին կարողութենէդ վեր ալ ըլլայ և կամ կրելու է այս սոսկալի շղթաներն ու նորահար տանջանքները՝ զորս կուտան գօմիթէ անունով:

Եոզղատի բոլոր գաւառակներու մէջ մէյմէկ տէրէպէյիններ կան. ասոնք այն աստիճան քաջալերեցան Քննիչ-Յանձնախումբին հայոց դէմ բռնած ընթացքէն, որ «դուք գօմիթէ էք, ըսելով, բանտարկել կուտանք» սպառնալիքներով հայերը կը տանեն կառավարութեան դուռը և հոն՝ «սաթգըմ, փարասընը թէմամէն ալգըմ» (ծախեցի և ստակն ալ առի ամբողջովին) ըսել տալով՝ առանց ստակ մը վճարելու, իրենց վրայ դարձնել կուտան այն արտերն ու աղօրիքները, այգիներն ու պարտէզները, որոնք ժողովուրդեան կեանքն են, միակ հարստութիւնը: Դատաւորները ընկեր եղած են այս կեղեքիչներուն հետ: Ասոր վրայ ժողովուրդը կը բողբոջէ նահանգին կուսակալին, որ զանոնք կանչելով իր մօտ, ցոյց կուտայ այն ամեն բողբոջագրերը՝ որոնք մատուցած են իրեն, յետոյ այլ և այլ սպառնալիքներով մէկէն 200, միւսէն 300 ոսկի առնելով թող կուտայ: Այդ շարագործներն են՝ գըրըէհերցի Քէօր օղլու Հիւսէին պէյ, Խաթուն օղլու Ալի պէյ, — որ պաշտպան է հռչակաւոր աւագակ Գըշար պէյ օղլու և անոր հետեւորդներուն — նշանաւոր հարստահարիչ կեսարացի Իպրահիմ, Եոզղատի պէյերն ու ուրիշները: Ահա՛ այն բողբոջագիրն, որոնք կուսակալին՝ անոր, որ պարտաւոր է իրենց պատիւն ու իրաւունքը պաշտպանելու, այսպէս քաջալերանքի գործիք մը եղաւ: Ա՛հ, որո՞ւ դիմէ խեղճ ու անտէր ազգը, անգութ գազաններու ձեռքը մնացող այս թշուառ ժողովուրդը, որո՞ւ յայտնէ իւր ցաւը. նիւթապէս և բարոյապէս ոչնչացած ենք: Շատ մը թերթեր լեցնելու է՝ նկարագրելու համար այդ տէրէպէյիներէն Բուստիլին գիւղացի Չէրքէս պէյ զատէ Հիւսէյին և Օմար պէյերուն ու իրենց 7-8 հատ գաւառներուն գործած հարստահարութիւններն ու կեղեքումները: Աւստի, մենք այդ ամենը մի կողմ դնելով, սաչափը կըսենք, թէ ասոնք աւագակի խումբ մը ունին

իրենց ձեռքի տակ, Վեսարիոյ և Բուստայի միջև, որոնք անխնայ կը կողոպտեն ու շատերն ալ կը սպանեն այն ամեն քրիստոնեայ ճամբորդներուն, որոնք առևտուր ունին Վեսարիոյ հետ: Անցեալ տարու հոկտեմբեր ամսոյն մէջ կողոպտած ու սպանած են Թէրչէլի գիւղացի Յակոբ քէհեան և վերջերս ալ կիւրտէհցի Խաչատուրը և ուրիշներ, որոնց անունը չեմ կրնար յիշել: Հոկտեմբեր վերջերը, դարձեալ մի և նոյն ճամբուն վրայ, 7 քրիստոնեաներու քիթն ու ախանջը կը տրած և գրպանին զրսծ էին: Ազունլուի դատարանը անձամբ քննեց ու տեսաւ ասոնք, բայց բնաւ չհետապնդեց չարագործները. որովհետև ատով վշտացուցած պիտի ըլլային Հիւսէյին և Օմար պէյերը, որոնք աւազակներուն ազգականներն են: Երբ գայմագամն, մութասարը և ուրիշներ ընկեր են իրենց հետ, այլ ևս կը զգուշանան ամեն տեսակ չարագործութիւններ ընելէ: Քրիստոնեաներուն համար ասոնք գիտնալ, ուրիշի մը հաղորդել և կամ կառավարութեան դիմել ոճրագործութիւն մըն է. բանտ ու տանջանք պատրաստ է իրենց համար, եթէ ոչ պէտք է գրաւոր խոստովանել, թէ իրենց ըրածը պարզապէս զրպարտութիւն է:

Ազունլուի մէջ, ուր մինչդեռ զինուոր պահելու բնաւ պէտք չկայ, կարգ մը սրիկաներու զինուորական զգեստ հագցնելով, գիւղերը կը զրկեն, ուր ամեն կերպ կեղեքումներ ի գործ կը դնեն: Ասոնք մինչև իսկ չոր հացի կարօտ տուններ մտնելով՝ համեղ կերակուրներ կը պահանջեն, հակառակ պարագային կը գանակոծեն և այլ և այլ տանջանքներ կուտան: Փախուցի Խաչատուր Կարապետը կտոր կտոր ըրած Ազունլուի և Չալապփէրտի միջև: Պօտէր օղլու աղքատ ծերունիի մը պղին մտնելով աւերելէ յետոյ, երբ խեղճ մարդը կաղաղակէ, անմիջապէս վրան հաւաքելով այն աստիճան կը ծեծեն, որ երկու օր վերջը կը մեռնի: Կառավարութիւնը, որ պատուջ բռնաբարումը, կողոպուտն ու սպանութիւնը պզտիկ ու անկարևոր բան մը կը համարէ, արդիօք ի՞նչ կերպ ոճրագործութիւններ մտադրած է մեր մասին, որ իրեն մեծ երևնայ: Մեզ լուծեան դատապարտած են, մեր բողոքները անլսելի կը մնան և միւս կողմանէ չարագործները կը կատողին, սոսկալի՛ կերպով կը կատողին. ի՞նչ կեանք է սյս...

Սէօպէ-Չիմէնց գիւղացի Պօղոս անուն երիտասարդ մը, որ երկաթագործութեամբ կը զբաղէ, խոստովարաններէն է ըսելով բանտ կը նետեն, ուր պատիւը կը բռնաբարեն հոն բանտարկած մարդասպաններ. խեղճ տղան չափազանց զգացելով այս բռնաբարումէն, կը խելագարի, որով կը պարտաւորին արձակել զինքը: Անկարելի չտեսնել ու չարտասուել այդ տղուն վրայ, որ Ազունլուի փողոցներուն մէջ կը թափառի յիմարական աղետար շարժումներով:

Պէպէքէն Փէօհրէնկ հարսանիքի կերթան կին մը, աղջիկ մը և այլ մը: Ճամբան համանցի թուրքերը՝ վերանին յարձակելով, կուզեն կիններուն պատիւը բռնաբարել: Երիտասարդը, Անանեան Մանուկ, կը դիմադրէ: Թուրքերը, զէնքը ձեռքէն առնելու նպատակաւ, գաւազանով զարնել կուզեն թեկին. գաւազանը հրացանին

ձգոցին հանդիպելով կը պայթի և գնդակը կերթայ թուրքերէն մէկուն կը դիպչի. թուրքերը կը յարձակին անգէն Մանուկի վրայ և, մեռնելու աստիճան բերելէ յետոյ, Ծաղիկին կուսութիւնն ալ կը պղծեն: Խնդիրը դատարան կիյնայ և Մանուկը, իբրև մարդասպան, 15 տարեան բանտարկութեան կը դատապարտուի: Բժշկաց կողմէ հաստատեցաւ, թէ Ծաղիկին կուսութիւնը պղծած էր. բայց բնաւ չփնդուեցաւ բռնաբարողները:

Բուն Եոզղատի մէջ գիշերները գօլ պտտող ոստիկանները, հայերը բռնելով բանտ կը նետեն, լապտեր ունենան կամ չունենան. յետոյ շատ մը ստակներ առնելով թող կուտան: Ասոնք կը բանտարկեն մարդ մը իր հետ գտնուող 14 տարեկան տղու մը հետ: Պահպանները կուզեն գիշերը բռնաբարել տղուն պատիւը: Գասպար անուն երիտասարդ, զոր վերև յիշեցինք, կը դիմադրէ: Հետեւայ օրը անոնք կարձակուին. իսկ պահպանները Գասպարէն վրէժ լուծելու համար, գիշեր ժամանակ տասնի չափ մարդասպան տաճիկ բանտարկեալներ զինելով վրան թող կուտան: Այս գազանները խեղճ տղուն ամեն կողմը վերաւորելէ յետոյ, կը բռնաբարեն պատիւը. ասով ալ չբաւականանալով՝ աւելի մը կապած երկար գաւազան մը կը կոխեն... և խելայեզ վիճակի մէջ թողնով կը մեկնին: Գասպար քանի մը օր յետոյ կը սթափի իր այս վիճակէն և ինդիրը դատարանին կը ներկայացնէ: Դէպքը, յետ քննութեան, կը հաստատուի բժշկաց կողմէ. բայց փոխանակ պատժելու այդ ոճրագործներն ու զանոնք քաջալերող պահպաններն, ընդհակառակը, Գասպարին և ընկերներուն մահաւան կը դատապարտեն: Ահա բողոքին հետեւանքը...

Ասկէ երկու շաբաթ առաջ Հերազ գացող միւֆթին և հարստահարիչ Խաչիլ պէյը ճամբելու համար երկու հազարի չափ սօֆտիաներ և հրոսակներ համախմբեցան դրօշակին տակ, որոնք քրիստոնեաներու թաղերը պատելով, բոլոր տունները քարեցին և շատ մը մարդիկ ալ վերաւորեցին: Կառավարութիւնը ակնառտես էր ասոնց, լուծութիւն պահելէ զատ բան մը չըրաւ: Խնդիրը Էնկիւրուի անգղիական հիւպատոսին ախանջը իյնալով վալիին կը դիմի, այս վերջինը ներք մնալով, թէ և քանի մը ձերբակալութիւններ ընել կուտայ, սակայն տարակոյս չունենք, թէ քանի մը օրէն ամենքն ալ պիտի արձակին:

Ահա հետեւանքը այն ազդեցութեան, զոր թողուց Մուսթափա փաշա մեր նահանգին մէջ:

- Ամեն կողմ աւեր, կողոպտում, պատուջ բռնաբարում, սպանութիւն կը տիրէ: Ի՞նչ կեանք...

Ն Ա Մ Ա Կ Օ Ր Դ Ո Ւ Ի Ծ

Սրդուի շրջակայ հայաբնակ գիւղի մը մէջ զարհուրելի դէպք մը պատահեցաւ: Յիշեալ գիւղի միւտիրը

քանի մը աղաներու հետ խորհուրդ կրնեն ջարդել հայերն ու այս նպատակով հրաման կրնեն տաճիկ գիւղացիներուն: Գիւղացիք, որ արդէն գրգռած տրամադրութեան մէջ կը գտնուին վերջին ատեններու պատահած դէպքերէն, երբ վարչական պաշտօնաւորէ մը կը խրախուսուին, բնականաբար սանձարձակ կը սկսին իրենց շահատակութիւնները: Ուստի տեղոյն տաճիկ գիւղացիք հայ ընտանեաց վրայ յարձակելով կսկսին աւերել պարտէզները, կոխկրտել հնձած գաշտերը և թալանելով ու կողոպտելով հայերու ստացածքներն, սուրերնին քաշած համարձակ, քար ու փայտով ալ կը յարձակին հայերուն վրայ: Խեղճ գիւղացիք սարսափած յանկարծական այս յարձակումէն, իրենց վիճակին անտեղեակ, անօթի ու մերկ, ոտերնին բոբիկ, գլուխնին բաց, կը բարձրանան սարերը: Փոքր երախաներ մեծերնուն հետեւելով, հակառակ լեռնային բերաւոր դժարութեանց, փշոտ ճամբաներն արհամարելով հետիտան կը քաշին:

Խեղճ հայեր կը գնան միւգիւրին կը պատմեն իրենց ցաւերն ու վշտերը, բայց ապարդիւն աշխատանք. անաչառ պաշտօնեան կաշառք կուզէ կորզել անոնցմէ, որոնք աղքատ ու անկարող չեն կրնար յագեցնել միւգիւրի առաջարկը: Ուստի կուգան Օրդու՝ գայմազամին դիմելով, կը պատմեն իրենց խղճալի վիճակը. բայց այդ դժբաղդ գիւղացիներու աղաչանք ու պաղատանք անօգուտ կը լինին:

Օրդուցի քանի մը անձինք իմանալով մանրամասնորէն պատահած սոսկալի դէպքն, կը խորհին հեռագրել Պոլսոյ անգլիական դեսպանին ու Պատրիարքին, բայց դժբախտաբար սոյն ձեռնարկ կառավարութեան արգելքի տակ չյաջողեցաւ: Հակառակ եղած դիմումներու, գայմագամը կը խոստանայ բռնել ու բանդարկել այդ մարդիկը և փնասները պետական գանձէն վճարել:

Վերակի առաւօտ մը կառավարական շատ մը պաշտօնեաներ ոստիկաններու ջոկատով մը կարշաւեն այդ գիւղը. տեսնելով գիւղի ամայի տեսարանը, որը անժխտելի կերպով կը հաստատէր եղելութիւնը, փնասած շատ մը տեղերը քննելով, կը բռնեն մարդիկը ու կապած Օրդու ղոկելով, անկէ ալ Տրապիզոն կը ճամբեն՝ հոն բանդարկելու համար:

Միւտիըը պաշտօնանկ եղած է. կառավարութիւնը ոստիկաններով լեցնել տուաւ քաղաքս ու անյագաբար աչքը դարձուցած է տեղոյս հայ հասարակութեան վրայ. միակ նպատակ՝ իրենց ծակ գրպանները լեցնելու համար է:

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Ծ

Թ ո ց գ ի ւ ղ ի գ յ ը ր ց ի ն ք ան գ ու մ ր .
Տրապիզոնէն 3 ժամ հեռի Թոց գիւղի հայերը ասկէ 2-3 տարի առաջ ձեռնարկած էին գիւղին գերեզ-

մանատան մէկ կողմը դպրոցի համար շէնք մը շինելու և այս տարի ալ կը լրացնեն զայն. այդ գերեզմանատան կից ունեցող կարգ մը մոլեռանդ կաթողիկ հայեր գիւղացիներու այդ քայլը արգելք տեսնելով կաթողիկ պրօպագանդայի, որուն համար իրենք հոն դըպրոց ու եկեղեցի շինած էին և միւս կողմէ ալ գրգռելով կառավարչական պաշտօնեաներէ, կուսակալին բողոք տւին ամսուս առաջները, թէ հայ գիւղացիներ առանց հրամանի դպրոց կը կառուցանեն և իրենց հողին սահմանը անցնելով, մեր հողին վրայ անցած են. բռնաւոր կուսակալին ալ ուզածը այդ էր, ինչ լաւ առիթ լուսաւորչականները և կաթողիկները իրար ձգելու և պատճառով մ'ալ դպրոցը մէջ տեղէն վերցնելու. ուստի առանց օրինական ձեւակերպութիւններ կատարելու, առանց քննելու, առանց Առաջնորդարանի իմացնելու, անմիջապէս զափթիէներ կը դրկէ թոց դպրոցը քանդելու խիստ հրամանով. 4 զափթիէներ անկարող զգալով միայնակ գիւղ մտնել, շրջակայ Զիւսմէրա և ուրիշ գիւղերէ 20-30 թուրք հաւաքելով ապրիլ 12-ին ահագին հայհույով մը կարշաւին գիւղը և գերեզմանատունը ոտնակոխ ընելով, մէկ երկու վայրկենի մէջ կատաղաբար վար կառնին նորաշէն դպրոցը: Երեք մարդիկ չեն գտնուիր այն ատեն և քանդումը առանց միջադէպի կը վերջանայ:

Գիւղացիներու պահանջմամբ, Առաջնորդարանէն բողոքեցաւ այս անիրաւութեան դէմ, փաստելով, թէ եթէ նոյն իսկ շէնքին հողը Հասունեանի բեկորներուն ըլլար, կուսակալ մը իր բռնապետի գծած օրէնքով իսկ չէր կրնար Տէրէ պէյի պէս վայրենի հրամաններ արձակել: Վուսակալը կարեւորութիւն չտուաւ այս արդար բողոքին և սկսաւ զանազան խնդիրներ ալ հանել՝ լուսաւորչական և կաթողիկ հայերու մէջ այս խնդրի պատճառով սաստկացած ատելութիւնը աւելի ևս արմատացնելու:

Ինչ հիանալի տիպ կառավարչի մը, ինչ արժանի գործակալ արիւնաքամ բռնապետի մը, ինչ բացարձակ փաստ կառավարութեան ճիւղալի ձգտումներու, քանգել դպրոց մը, մարել լուսաւորութեան դեռաբողոք վատարան մը, ջլատել խեղճ գիւղացիներու ինքնազարգացման ուժը, ամեն տեսակ կեղծ ու ստոր միջոցներով գրգռել, իրար սոսկալի ատելի թշնամիներ ընել երկու այլաբաւան եղբայրներ, յայտնապէս քաջալերել թուրք գիւղացիները ամեն, անիրաւութիւններ, յարձակումներ կատարել հայերու դէմ. դա միայն անտանելի կերպով ներկած թուրք մահամերձ կառավարութեան անձեռնամխելի արժանիքն է:

Շատ, շատ աւելի ոճիրներ կարելի է սպասել գազան ու կեղծաւոր պաշտօնեայէ մը, որ սուլթանէն շատ խիստ յանձնարարութիւններ կան հայերը ճգմելու և որուն նշանաբանն է ուտել, ուտել և ուտել. . .

Վեջերս Իւնայի շրջակայ Գօրգամազլի անուն գիւղին մէջ կիւռձի գաղթական աւազակներ կը յարձակին հայի տան մը վրայ. հայերը իմաց կուտան մտերը գտնուող պահապան զինուորներուն, որոնք կարծելով թէ աւազակները վրացիի հագուստով հայ յեղափոխական-


ներ են, անմիջապէս կը պաշարեն զանոնք և 2 կը սպաննեն: Բայց, ո՞վ յուսախաբուածին, իրօք մահմեդական կիւռձիններ են եղեր սպանւածները:

Այս ձախող գործին վրէժը առնելու համար, հենց միւս օրը գիւղին քահանան, մուխթարը և մէկ քանի զիւղացիներ Իւնա կը տանին, կը բանտարկին, պատուակելով՝ թէ դուք ալ մասնակից էք այդ աւազակներուն, բայց ագոր ալ ստուծիւնը շուտով երևան կենէ: Քանի մը օր վերջը փախչող աւազակները ուրիշ ընկերու հետ դարձեալ կուգան նոյն գիւղը և գնդակահար կսպանին 3 հայ և մի թուրք: Զինւորներ կը զօրէին աւազակները ձերբակալելու...

Բանդարկաւածները երաշխաւորութեամբ ազատ կը թողնին:

Այս քաղքին սիւվարի Չաուշին Ղարա Ահմէտ իր հետ առնելով երկու վատհոգիներ, Բէօքլուկ գիւղի Արիստակէս քահանային սպանալիքով 25 մէճէտ և 18 քիլէ ցորեն կը կորզէ: Տ. Արիստակէս կը բողբոքէ, բայց Ղարա Ահմէտ կը մնայ անպատիժ:

Իւնայի մէջ ալ օրէ օր թուրքերը կը գրգռին հայոց դէմ և տեսնւեցաւ, որ եթէ պատե՛հ առիթը ներկայանայ, պիտի կրնան կատարելապէս գլուխ հանել տեղոյն հայերը բնաջինջ ընելու գործը շնորհիւ վե՛հ սուլթանին:



ԱՊՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԱԿԵՒՈՒՆԱՅՈՒՄ


Մեր ընկերոջ հաղորդածը.

—Յունիսի 11 (ն. տ. 23) գիշերուայ ժամը 11 և 30 ր. Արմաթ օրը Կրատովցի շրջակայքում ապստամբները մօտ 45 հոգի, Դիմօ Դեադօտի առաջնորդութեամբ կռիւ ունեցան զօրքի հետ: Անյարմար դիրքի շնորհիւ նոքա կորցրին 2 մարդ: Բայց կարողացան դուրս գալ և այժմ յարմար դիրք ունին: Զօրքերը օգնութիւն են ստանում բացի դրանից նոքա գիւղերից դուրս են բերում բուլղարներին իրենց եղբայրների դէմ: Գիշերը Պալանկայ բերին մի սայլ սպանւած և վիրաւորւած զինւորներ:

—Յունիսի 13 (ն. տ. 25). Վերջին լուրերը հաղորդում են, որ Դիմօ Դեադօտի խումբը ջարդելով զօրքի շղթան՝ անցաւ դէպի Վարդար: Նոցանից սպանւած են 2 և 1 վիրաւորւած: Զօրքից սպանւած են աւելի քան 30 հոգի: Սպանւած են նոյնպէս 17 հոգի բուլղարներից, որոնց կառավարութիւնը ստիպելով դուրս էր բերել իրենց եղբայրակիցների դէմ: Վախենալով սրանց զէնք տալ, կառավարութիւնը տւել էր սրանց մահակներ:

—Նիկոլի խմբից մնացել են 9 հոգի, բայց թէ ո՞րտեղ են, յայտնի չէ:

—Ենթադրում են, որ երկրի խորքերումն էլ ապստամբութիւն է սկսւել:



Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

«ՀՆՉԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Զարմանքով կարդացինք «Հնչակի» թիւ 9-ի մէջ Կ. Պոլսէն խրկւած լուր մը, որուն համաձայն իբր թէ հնչակեանները զարկած ըլլան դաւաճան թիւթիւնձեկը, մինչդեռ Դաշնակցութեան Կ. Պոլսոյ կեդրոնական կոմիտէին նախագոյն որոշումով եւ տեղական կոմիտէներէն «Զոհ»-ին ահաբեկիչներուն ձեռքով ի գործ դրեցաւ անոր մահուան վճիռը:

Չմանրալով այն կէտին վրան, թէ Յեզափոխութեան տեսակէտէն կարեւորութենէ իսպառ զուրկ է յեղափոխական ո՞ր եւ է արարքի մը այս կամ այն կուսակցութեան ձեռքով կատարւած ըլլալը,—ու չափ միայն կուզենք զիտել տալ, որ թէ՛ Դաշնակցութեան Կ. Պոլսի կեդրոնական կոմիտէիս եւ թէ՛ Հնչակեան կուսակցութեան Պոլսի Մասնաճիւղին համար պատուաբեր չեն կրնար ըլլալ երբէ՛ք այդ օրինակ սխալներ ու թիւրիմացութիւնները: Ուստի կը յուսանք թէ «Հնչակի» խմբագրութիւնը պիտի փութայ իր սխալն ուղղելու ստուգագոյն աղբիւրներէ առնւած անմիջական տեղեկութիւններով:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

ՆՆՈՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Կ. Պոլսի կեդրոնական սնդուկի մէջ ստացւեցան.

Մանիշակ քղ-էն Մեղու 45 դահեկան, Կարիճ 100 դահ., Արուսեակ 100 դահ., Ա. 20 դահ., Համ 20 դ., Ար. 10 դահ., Հուր 40 դահ., Բոց 20 դահ., Վրէժ 40 դ., Օրէն 20 դահեկան:

Վիշապ քաղաքէն Սմբատեան խմբ. 100 դահ. և 150 դահ., Արշակունեան 80 դահ., Քառօ 10 դահ.:

Նիզակ քաղաքի կեդրոնական սնդուկի մէջ ստացւեցան.

Անյայտ 480 դահեկան, Յ. Յպ. 540 դահ., Յ. Յկ. 190 դահեկ.:

Անդ. Կ. երկրի Վ. Ա-ից 242 ռուբ., Ասդրուզմից 180 ռուբ., 56 ռուբ., 44 ռուբ.:

Աւրմից գաւառում, մի խումբ Ասորիներից 36 զրան:

Յիշեցնում ենք, որ ամսոյս 13-ին (ն. տ. 25), լրանում է Սասունի Ապստամբութեան և Մեծ Կոտորածի միամեակը: «Դրօշակի» եկող համարը ամբողջովին նւիրւած կը լինի մեր յեղափոխութեան պատմութեան մէջ այդ ամենանշանաւոր անցքին:

Թէև ինչ ինչ պատճառներով ուշացաւ Տրապիզոնի նամակը, բայց և այնպէս հարկ համարեցինք նրան զետեղել այս համարում:

Դաշնակցութեան ամսանոթներից խնդրում է թղթակցութեան եւ ներատուութեան համար ղեմել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազտու սպորան